



ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԷՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ  
Կեդրոնական Վարչական Ժողով

Ապրիլ 5, 1976

Նիւ Եոբֆ

Ամենապատիւ Տ. Եղիշէ Արֆ. Տէրտէրեան

Պատրիարք Հայոց Երուսաղէմի

Երուսաղէմ, Իսրայէլ

Ամենապատիւ Տէր,

Քրիստոսի հրաշափառ Յարութեան մտալուտ տօնին առի-  
թով մեր ակնարկները կ'ուզուին դէպի Երուսաղէմ, ուր Աստուա-  
ծակոյս բլուրներուն վրայ դարձեալ կը ծաղկի Հայոց Պատրիար-  
քութեան դարաւոր Աթոռը:

Մեզի համար մասնաւոր հանոյժ է յանուն Հ. Բ. Ը. Միու-  
թեան համայն անդամակցութեան և մեր կողմէ անձամբ շնորհա-  
ւորել Ձերդ Ամենապատուութիւնը, ինչպէս նաև Վանքին նուիր-  
եալ Միաբանութիւնը:

Մեր սրտագին մաղթանքն է որ խաղաղութիւնը շարունակ-  
ուի այդ աշխարհամասին մէջ, որպէսզի Երուսաղէմի Պատրիար-  
քութեան ու Միաբանութեան խաղաղ և ստեղծագործ աշխատանքը  
պտղաւորուի՝ ի նպաստ ամբողջ Հայութեան:

Արևշատութեան ու բարօր կեանքի սրտագին բարեմաղթու-  
թիւններով. կը մնամք,

Խորին ակնածանօ՛ք՝

Ա. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Նախագահ